ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ.060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
27 ԱՊՐԻԼԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 120

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Վերին Պտղնի համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 13-ի թիվ 4-Ա որոշումը, ինչպես նաև «Արտաշ Գևորգյան» ՍՊԸ-ի դիմումը՝ **որոշում եմ.**

1. «Արտաշ Գևորգյան» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող՝ /սեփ. վկայական N21211168 տրված 08.09.2006թ./ արտադրական, արդյունաբերական օբյեկտի հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

2021 թ.ապրիլի 27
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060 517670,
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
28 ԱՊՐԻԼԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 121

ԱՐԹՈՒՐ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածով, համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 56-Ա որոշմամբ, հիմք ընդունելով համայնքի բնակիչ Արթուր Ալեքսանյանի դիմումը, միաժամանակ հաշվի առնելով համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմաններն ուսումնասիրող հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

Համայնքի 2021 թվականի բյուջեի այլ նպաստներ ծախսերի 10 խմբի 7-ի ենթախմբի 4729 հոդվածից Վերին Պտղնի համայնքի բնակիչ Արթուր Ալեքսանյանին տալ 60000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ օգնություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

2021 թ. ապրիլի 28
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48 , Հեռ.060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
30 ԱՊՐԻԼԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N122

ՍՈՒՍԱՆՆԱ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջը, ինչպես նաև քաղ. Սուսաննա Պողոսյանի դիմումը՝ **որոշում եմ**

1. Սուսաննա Պողոսյանին տալ իրեն պատկանող բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասում հասարակական սպասարկման օբյեկտի կառուցման շինարարական աշխատանքները սկսելու թույլտվություն :

2. Հանձնարարել Սուսաննա Պողոսյանին շինարարական աշխատանքներն իրականացնել համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի համաձայն:

3. Շինարարական աշխատանքները սկսելուց հետո եռօրյա ժամկետում Վերին Պտղնի համայնքի համայնքապետարան ներկայացնել ձև N5 տեղեկանքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

2021թ. ապրիլի 30
գ.Վերին Պտղնի